ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Federal Ministry
for Economic Cooperation
and Development

ԵՄ ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ.
Առավել ուժեղ համայնքներ եվ տեղական նախաձեռնություններ

ուսումնառություն, ստեղծարարություն **նորարարություն՝**

ի նպաստ համայնքահենք մշակույթի եվ զբոսաշրջության

ԵՄ ՀԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ.
Առավել ուժեղ համայնքներ եվ տեղական նախաձեռնություններ

ուսումնառություն, ստեղծարարություն **նորարարություն՝**

ի նպաստ համայնքահենք մշակույթի եվ զբոսաշրջության

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Federal Ministry
for Economic Cooperation
and Development

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Գերմանիայի դաշնության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Գերմանիայի դաշնության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության տեսակետները:

vhs
DVV International

ASSOCIATION OF MUSEUM WORKERS AND FRIENDS

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՍԻՎԻՏԱՍ
Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ

Ծրագրի և գրքույկի մասին

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնող թիմը սիրով ներկայացնում է այս գրքույկը, որը փաստերի, պատկերների և պատմությունների միջոցով ամփոփում է ծրագրային կարևոր փուլերն ու արդյունքները: Գրքույկը պատմում է այն գործիքների ու մոտեցումների մասին, որոնք կիրառվել են Ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև անդրադառնում է այն տպավորիչ ձեռքբերումներին, որ իրենց աշխատանքում արձանագրել են գործընկեր կազմակերպությունները, շահառու Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (այսուհետ՝ ՔՀԿ), թանգարանները, դպրոցները:

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագիրը սկսվել է 2018 թ. փետրվարին և հաջորդող 39 ամիսների ընթացքում այն գործել է թիրախային երեք մարզերում՝ Գեղարքունիքում, Կոտայքում և Շիրակում: Եվրոպական միությունը և Գերմանիայի դաշնության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը (BMZ), այս Ծրագրի մեջ 547,026,80 եվրո (85% ԵՄ-ի կողմից) ներդնելով, աջակցել են հետևյալ նպատակների իրագործմանը.

- քաղաքացիական հասարակության, երիտասարդների, մշակութային կազմակերպությունների և այլ շահակիրների ավելի ակտիվ ներգրավում մարզային և համայնքային զարգացումներին՝ կարողությունների զարգացման և ֆինանսական ռեսուրսների տրամադրման միջոցով,
- զբոսաշրջության զարգացում և բնապահպանական իրազեկվածության բարձրացում՝ բնական, մշակութային և մարդկային ռեսուրսների վերհանման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև սոցիալական ձեռներեցության խթանման միջոցով:

Երեք մարզերից յուրաքանչյուրում հանրային քննարկումների միջոցով ընտրվել են ծրագրի իրականացման թիրախային համայնքախմբեր (կլաստերներ), այն է՝

| Արդենիս |Բերդաշեն
| Գառնառիճ | Ծաղկուտ
| Ծաղիկ
բնակավայրերով

| Արզական | Արտավազ
| Բջնի | Հանքավան
| Մեղրաձոր
բնակավայրերով

| Սևան/Լճաշեն
| Գավառ/Նորատուս
| Մարտունի/Մադինա
բնակավայրերով

Այս կլաստերներում և համայնքներում իրականացվել են ծրագրային բազմաթիվ աշխատանքներ, այդ թվում

ընդհանուր ներդրումը կազմել է

86,978,630 դ

Տեղական ՔՀԿ-ները իրականացրել են 8 ծրագրային նախագիծ
6 սոցիալական ձեռներեցության նախաձեռնություն 4 հետազոտություն
3 ինովացիոն դրամաշնորհ

ընդհանուր ներդրումը կազմել է

15,591,000 դ

Թանգարանների համար մշակվել և ներդրվել է 5 մուլտիմեդիա բովանդակությամբ հարթակ

ընդհանուր ներդրումը կազմել է

4,475,000 դ

Երիտասարդների կողմից իրականացվել է 12 փոքր համայնքային նախագիծ

ընդհանուր ներդրումը կազմել է

3,986,080 դ

Թանգարաններում հիմնվել է 3 ոչ ֆորմալ կրթական լաբորատորիա

Արդյունքում ստեղծվել է ավելի քան

60 մշակութային և զբոսաշրջային ռեսուրս

Ծրագիրն իրականացնող կազմակերպություններից յուրաքանչյուրն իր եզակի և առանձնահատուկ փորձառությամբ նպաստել է ծրագրի հաջող իրականացմանը: Այսպես, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը կարևորել է մեծահասակների կրթական մոտեցումների (դասընթացներ, մենթորություն, խորհրդատվություն, գործնական փորձարկում) կիրառումը որպես շահառու ՔՀԿ-ների կարողությունների զարգացման առաջնային գործիք: Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի աջակցությամբ, տեխնոլոգիական և մուլտիմեդիա լուծումներով արդիականացրել է թանգարանային բովանդակությունը և դրա ներկայացումը: Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻՏԱՍ ՀԿ-ն երիտասարդների հետ աշխատելու իր ուրույն մեթոդաբանությունը կիրառել է՝ նրանց համայնքային զարգացման գործընթացներում ներգրավելու համար:

Այս գրքույկն ամփոփում է ծրագիրն իրականացնող գործընկերների, շահառու ՔՀԿ-ների, թանգարանների և կրթական հաստատությունների կողմից իրականացված հիմնական աշխատանքները և առանցքային ձեռքբերումները: Գրքույկի 4 հիմնական մասերն անդրադառնում են ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացմանը (Մաս 1), ծրագրի արդյունքում ստեղծված ռեսուրսներին և պրոդուկտներին (Մաս 2), ծրագրային ինովացիային (Մաս 3): Գրքույկի 4-րդ մասը ներկայացնում է այն բոլոր կազմակերպություններին, թիմերին և անհատ փորձագետներին, որոնք ներգրավված են եղել ծրագրի իրականացման մեջ:

Շնորհակալություն ենք հայտնում ծրագրի դոնորներին, գործընկերներին, շահակիցներին և շահառուներին ծրագրի հաջող իրականացման մեջ իրենց արժեքավոր ներդրման համար: Հատկապես կարևորում ենք ՔՈՎԻԴ-19 համավարակի և 44-օրյա ռազմական գործողությունների պայմաններում ճկուն և հետևողական մոտեցումներով աշխատանքը շարունակելը և ավարտին հասցնելը:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ծրագրային թիմ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ծրագրային թիմ
Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի ծրագրային թիմ
Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻՏԱՍ ՀԿ-ի ծրագրային թիմ

Մաս 1

Գիտելիք և հմտություններ՝ ի նպաստ մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում զգալի աշխատանքներ են տարվել շահառու ՔՀԿ-ների, թանգարանների և դպրոցների կարողությունների զարգացման ուղղությամբ: Դրանք միտված են եղել համայնքների և տեղանքների մշակութային և զբոսաշրջային ներուժը վերհանելուն և զարգացնելուն: Հայտնաբերված ռեսուրսները զբոսաշրջության նպատակով կիրառելու, նոր պրոդուկտներ մշակելու և առաջարկելու՝ շահառուների կարողությունների բարելավման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Դասընթացավարների վերապատրաստում. մասնակից դասընթացավարների մեծ մասը մշտապես ներգրավված է եղել Ծրագրի իրականացման աշխատանքներում:
- Ծրագրի շահառու ՔՀԿ-ների, թանգարանների և դպրոցների վերապատրաստում դասընթացների միջոցով:
- Մենթորություն՝ ի աջակցություն դրամաշնորհային նախագծերի առաջարկների մշակմանը և դրանց իրականացմանը:
- Շահառու ՔՀԿ-ների կողմից իրականացված դասընթացներ:
- Խորհրդատվություն սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններ իրականացնող ՔՀԿ-ներին:

Հիշարժան թվեր և փաստեր

88
Մասնակից կառույցներ
59 ՔՀԿ | 6 թանգարան | 23 դպրոց

53
Փորձագիտական աջակցության հանդիպում
19 | մենթորություն
34 | խորհրդատվություն

42
Դասընթաց
19 | իրականացրել է ծրագրային թիմը[1]
34 | ծրագրի շահառու ՔՀԿ-ները

525
Ընդհանուր մասնակից
339 | ծրագրային դասընթացներին
186 | ՔՀԿ-ների դաընթացներին

26
Ներգրավված մասնագետներ
15 | դասընթացավար
5 | մենթոր
6 | խորհրդատու

1. Ծրագրային թիմի, այն է՝ Ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից անցկացված դասընթացները վերաբերում են Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻԹԱՍ ՀԿ կողմից շահառու ՔՀԿ-ների, թանգարանների և դպրոցների համար կազմակերպված դասընթացներին: Դրամաշնորհ ստացած ՔՀԿ-ներից մի քանիսի նախագծերում նույնպես ներառված են եղել դասընթացներ:

Դասընթացներն ըստ տեսակի և թեմաների

Դասընթացավարների վերապատրաստում

Curriculum GlobALE վերապատրաստման ծրագրի հիման վրա մեծահասակների կրթության պրակտիկա և տեսություն

Ներածական դասընթացներ

- Զբոսաշրջության զարգացումները և ռազմավարությունը Հայաստանում
- Զբոսաշրջային վայրը և հիմնական ենթակառուցվածքները
- Համայնքային ռեսուրսների քարտեզագրման ABCD մեթոդաբանության

Թեմատիկ դասընթացներ ՔՀԿ-ների համար

- Ինչպե՞ս զբոսաշրջային վայրը դարձնել ավելի գրավիչ
- Հանրային կապերը, միջոցառումների կազմակերպումն ու կառավարումը մշակույթի և զբոսաշրջության ոլորտում
- Համայնքահենք զբոսաշրջության զարգացում
- Media Sapiens: Առցանց պատմություններ ստեղծելու և տարածելու հմտություններ ՔՀԿ ներկայացուցիչների համար
- Միջմշակութային հաղորդակցություն
- Համայնքի էկոզբոսաշրջային պատկերը
- Զբոսաշրջային պրոդուկտի ստեղծում
- Սոցիալական ձեռներեցություն: Բիզնես պլանավորում
- Քովիդ-19: Ազդեցությունը զբոսաշրջության ոլորտի վրա: Ինչպե՞ս չեզոքացնել հետևանքները
- ՀՀ հարկային օրենսդրությունը ՓՄՁ-ների

Դպրոցների ուսուցիչների եվ աշակերտների համար

Երիտասարդների ներառման և առաջնորդության մոդուլ

Թանգարանների համար

Մուլտիմեդիա գործիքներ թանգարանների համար

Հաղորդակցության հմտություններ մարզային թանգարանների համար

Շահառու ՔՀԿ-ների կողմից իրականացված դասընթացներից մի քանիսը[1]

Թեմա	Իրականացնող ՔՀԿ
1. Ժամանակակից մեդիա գործիքների կիրառությունը զբոսաշրջության ոլորտում 2. Զբոսաշրջային պրոդուկտի արդյունավետ վաճառք օնլայն մեդիայի միջոցով 3. Վլոգգինգ. ինչպե՞ս ստեղծել արդյունավետ վիդեո պատմություններ	Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա ՀԿ
1. Բանավոր պատմություն. Ավանդազրույցների և տեղական պատմությունների հավաքագրում 2. Համաշխարհային և տեղական բնապահպանական խնդիրներ 3. Քայլարշավային երթուղիների անցանց և առցանց քարտեզագրում	«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցման ՀԿ
Զբոսաշրջության սերտիֆիկացիոն ծրագիր՝ բաղկացած 8 մոդուլից	«Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ
Զբոսավարների և ուղեկցորդների պատրաստման դասընթաց	Շենացնենք մեր գյուղը ՀԿ
Թաղիքագործություն. դիզայն և արտադրություն	Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն ՀԿ
Բնապահպանության դասընթացներ դպրոցների ուսուցիչների համար	Երեխաների աջակցության հիմնադրամ

1 Շահառու ՔՀԿ-ների կողմի անց են կացվել բազմաթիվ և բազմաբնույթ դասընթացներ: Այս գրքույկում ներառված են միայն այն դասընթացները, որոնք ուղղակի ազդեցություն են ունեցել համայնքահենք մշակութային և զբոսաշրջային ռեսուրսների ստեղծման վրա:

Ծրագրային պատմություն.

Եվրոպական միությունն աջակցում է Կոտայքի և Գեղարքունիքի երիտասարդներին՝ բացահայտելու սեփական համայնքներն իրենց և այցելուների համար

Ծանոթացե՛ք Հայկուհու և Սոնայի հետ՝ Գեղարքունիքի մարզից, և Ֆրիդայի ու Համբարձումի հետ՝ Կոտայքի մարզից: Այս երիտասարդներին և նրանց ընկերներին միավորել է «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագիրը: Լինելով Ծրագրի ենթադրամաշնորհառու երկու կազմակերպությունների («Բլեջան» ՀԿ (Գեղարքունիքի մարզ) և «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ (Կոտայքի մարզ)) շահառուներ՝ վերջին մի քանի ամիսներին նրանք ժամանակն օգտագործեցին արահետների քարտեզագրման և կայուն զբոսաշրջության, զբոսավարության և շրջայցերի մշակման ոլորտներում իրենց գիտելիքներն ու հմտությունները հարստացնելու համար: Նրանք մասնակցեցին դասընթացների, հետազոտություններ իրականացրին, ուսումնասիրեցին և վերաբացահայտեցին իրենց համայնքների և մարզերի մշակութային և զբոսաշրջային ներուժը, ինչպես նաև դրանք ուրիշներին հասանելի դարձնելու հնարավորությունները:

Քարտեզագրված արահետներից մեկը, որ մշակվել է Հայկուհու և նրա ընկերների կողմից, ձգվում է Ծովազարդ գյուղից մինչև Յոթ քար լեռը և անցնում է հիասքանչ բնական միջավայրով՝ հարուստ ծաղիկներով և խոտաբույսերով, անզուգական գեղեցկությամբ և խաղաղությամբ: Մյուս արահետն անցնում է Սևան ազգային պարկով, որտեղ էլ իրականացվեց արահետների քարտեզագրման նախագծի փակման միջոցառումը: Մի խումբ երիտասարդներ և կամավորներ, Ծրագրի թիմը և Ազգային պարկի անձնակազմը քայլեցին արահետով՝ մաքրելով այս պահպանվող տարածքը, և գծանշեցին այն՝ օգտագործելով կոդավորման միջազգային համակարգ: Արահետների և երթուղիների փորձարկումը նախագծում ներգրավված երիտասարդներին վստահություն ներշնչեցին, որ իրենք ձեռք են բերել արահետների քարտեզագրման և արշավային խմբեր ուղեկցելու հմտություններ, և գուցե նրանցից շատերի համար այն դառնա մասնագիտություն:

Կոտայքի մարզում զբոսավարության դասընթաց անցած երիտասարդները գործնականում կիրառեցին իրենց հմտությունները՝ ծրագրային թիմի ներկայացուցիչների, Կոտայքի ՔՀԿ-ների և տեղի բնակիչների համար փորձնական շրջագայություն անցկացնելով: Գևորգն այցելուներին ներկա-

յացրեց Նոր Հաճնի կամրջի յուրահատուկ կառուցվածքը և բազմաթիվ նոր տեղեկություններ հայտնեց Գյումուշի հիդրոէլեկտրակայանի մասին: Ֆրիդան խմբին ուղեկցեց դեպի Վալես պապի տուն (նրան բոլորը Արզականում այդպես են անվանում), ով ինքնուս արվեստագետ է և գեղագիտական արժեքներ է ստեղծում՝ իր տունը ներսից և դրսից զարդարելով խճանկարներով: Հետո Համբարձումը Բջնիում խմբին ուղեկցեց դեպի այսպես կոչված Ծակ քար: Այս տպավորիչ բնական հուշարձանի շուրջ բազմաթիվ առասպելներ են հյուսվել:

Կոտայքի և Գեղարքունիքի երիտասարդների հետ խոսելիս ակնհայտ էր, թե հատկապես ինչն էին կարևորում այս ծրագրին մասնակցության մեջ: Հիմնական պատասխաններն էին «ընկերությունը» և «իրենց համայնքներն ու մարզը նորովի ճանաչելը»: Ծրագիրը նրանց օգնեց տեսնել Հայաստանի փոքր քաղաքների և գյուղերի հարուստ պատմությունը, ավանդույթներն ու մշակույթը, ինչպես նաև հյուրընկալ առօրյան, որը կարող է գրավել Հայաստանի տարբեր մարզերից և արտերկրից ժամանող զբոսաշրջիկներին:

Մաս 2

Ռեսուրսներ և պրոդուկտներ՝ ի նպաստ մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի կողմից աջակցություն ստացած 22 ՔՀԿ-ները, 6 թանգարանները և 11 դպրոցները ստեղծել են ավելի քան 60 ռեսուրս և գործիք, այդ թվում՝ տուր փաթեթներ, արահետներ, փողոցային նշաններ և բազմաթիվ այլ պրոդուկտներ:

Հիշարժան թվեր և փաստեր

5 տուր փաթեթ

9 արահետ
| 5 քայլարշավային, 4 հեծանվային |
քարտեզագրվել և ներբեռնվել է Google Maps հարթակում

20 փողոցային նշան և ցուցանակ

5 ենթակառուցվածքային միավոր. ճաշասրահ, ֆոտո ատելիե և հուշանվերների խանութ, էկո կայանատեղի, թոնրատուն, ներառական էկո արահետ

5 մուլտիմեդիա ցուցադրություն թանգարաններում

7 գիրք

3 ոչ ֆորմալ կրթական լաբորատորիա թանգարաններում

27 տեսաֆիլմ

Ներդրումը[1] և պրոդուկտները՝
ըստ թիրախ մարզերի

	Ներդրում	Պրոդուկտ
Գեղարքունիք	39,207,260 դ	1 մուլտիմեդիա ցուցադրություն 1 ոչ ֆորմալ կրթական լաբորատորիա 9 արահետի քարտեզագրում և ներբեռնում Google Maps հարթակ 1 զբոսաշրջության դասընթացի ծրագիր 1 փոստային բացիկներով տուր Փողոցային նշաններ, ցուցանակներ 1 տուր փաթեթ 1 ֆոտո ատելիե և հուշանվերների խանութ 1 ճաշասրահ 1 բացօթյա միջոցառում
Կոտայք	36,684,450 դ	2 մուլտիմեդիա ցուցադրություն 1 ոչ ֆորմալ կրթական լաբորատորիա 1 զբոսաշրջային ասոցիացիայի հիմնում և ռազմարության մշակում 1 ներառական էկո արահետ 4 տուր փաթեթ 1 թոնրատուն 1 բացօթյա միջոցառում-փառատոն
Շիրակ	35,139,000 դ	2 մուլտիմեդիա ցուցադրություն 1 ոչ ֆորմալ կրթական լաբորատորիա 1 տուր փաթեթ 1 էկո կայանատեղի Թաղիքե հուշանվերներ Թանգարանային հուշանվերներ 1 բացօթյա միջոցառում-փառատոն

1. Ներդրումն արտացոլում է այն ֆինանսական աջակցությունը, որ տրամադրվել է շահառու ՔՀԿ-ներին, թանգարաններին և դպրոցներին՝ թիրախային մարզերում պիլոտային նախագծեր, սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններ, համայնքային փոքր ծրագրեր իրականացնելու, մուլտիմեդիա բովանդակություն և կրթական հարթակներ ստեղծելու համար: Այդ ֆինանսավորման գրեթե 75 տոկոսից ավելին ուղղվել է ծրագրային աշխատանքներին, իսկ 20-30 տոկոսը (պայմանավորված նախագծի մեծությամբ՝ վարչական ծախսերին:

6 գրավիչ առաջարկ

Արփիի էկոկայանատուն

| Ծաղկուտ, Ծիրակ |

Արփի լճի մերձակայքում՝ Ծաղկուտ գյուղում, հիմնվել է գբոսաշրջիկների աջակցության այս խիստ անհրաժեշտ կայանատեղին, որն անվանվել է Արփիի էկոկայանատուն: Մեկ սենյակից և բացօթյա տաղավարից բաղկացած այս կայանը շատ հարմար է արշավականների և բնասերների համար: Այստեղ կարելի է կանգ առնել, հանգստանալ և հիանալ լճի հոյակապ տեսարանով: Այցելուները կարող են նաև օգտվել մի շարք ծառայություններից՝ վրանների վարձույթ, հեռախոսների լիցքավորում, հեռադիտակի և աստղադիտակի տրամադրում՝ թռչնադիտության կամ գիշերային աստղադիտության համար: Կայանատունն ունի արևային վահանակ և տաք ջուր: Էսթետիկ միջավայրն ապահովված է ներքին և արտաքին հետաքրքիր հարդարման միջոցներով:

Իրականացնող | «Ալվան ծաղիկ» սոցիալ – կրթական կենտրոն ՀԿ, Գյումրի ակումբ ՀԿ

Երեքը մեկում

| Արզական-Բջնի- Հանքավան- Մեղրաձոր, Կոտայք |

Ամիսներ շարունակ կոտայքցի մի խումբ երիտասարդներ հետազոտում էին իրենց համայնքները՝ բացահայտելով առասպելներ, մարդկանց, պատմություններ ու նոր տեսարժան վայրեր: Արդյունքում նրանք մշակել են մի քանի երթուղի, որոնք առաջարկելու են այցելուներին, իսկ իրենք հանդես են գալու որպես զբոսավար: Խորհրդային ժամանակներում կառուցված Նոր Հաճնի ինքնատիպ կամուրջն ու Գյումուշի հիդրոէլեկտրակայանը, ինքնուս որմնանկարիչ Վալես պապի նկարազարդ տունն ու Բջնիի բնական հուշարձան Ծակ քարն իր առասպելներով. ահա մի քանի հետաքրքիր կանգառներ, որոնց կնայեք երիտասարդների աչքերով ու միգուցե անակնկալ բացահայտումներ անեք:

Իրականացնող | Շենացնենք մեր գյուղը ՀԿ

Ճամփի ընկեր

| Սևան, Գեղարքունիք |

Ինովացիոն հետաքրքիր գաղափար է փոստային բացիկներով շրջագայությունը, որի օգնությամբ կարող եք անցնել Սևան-Գավառ-Մարտունի երթուղով՝ այցելելով հետաքրքիր ու տեսարժան վայրեր: Սևանում կտեսնեք քաղաքի առաջին տունը, Գավառում կմասնակցեք քյուֆթայի պատրաստման վարպետաց դասին, իսկ Մարտունիում գտնվող ձիաբուծարանում կծանոթանաք արաբական հովատակներին: Կամ էլ կարող եք լրիվ ուրիշ երթուղի ընտրել, որը ձեզ կտանի մեկ այլ ճանապարհով: Եթե ձեռքի տակ բջջային հեռախոս ունեք, կարող եք սկանավորել փոստային բացիկի վրա նշված QR կոդը և գնալ վիդեո-պատմությունների հետքերով:

Իրականացնող | «Սևան» երիտասարդական ակումբ ՀԿ

«Էթիունի. մոռացված թագավորություն»

| Լճաշեն, Գեղարքունիք |

«Էթիունի. մոռացված թագավորությունը» հիմնվել է 2020 թ. Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղում: Այն իրենից ներկայացնում է հյուրատուն, որն ունի նաև ուրարտական ոճավորմամբ ճաշասրահ ու թեյարան: Էթիունի թագավորության հյուրերը կարող են ծանոթանալ ուրարտական մշակույթին սրահների որմնանկարների և դեկորների միջոցով, լուսանկարվել ուրարտական ոճի հանդերձանքով և իհարկե համտեսել հայկական ազգային խոհանոցի բազմատեսակ, համեղ կերակուրները: Զբոսաշրջիկները կարող են նաև այցելել լճաշենյան հնագույն բնակատեղին, տեսնել ուրարտական Արգիշտի 1-ին արքայի սեպագիր արձանագրությունը, ինչպես նաև մասնակցել հատուկ թագավորության հյուրերի համար առաջարկվող քայլարշավների:

Իրականացնող | Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ

«Թագանի» ֆոտո ատելիե և հուշանվերների խանութ

| Մարտունի, Գեղարքունիք |

Մարտունիում հայտնի «Թագանի» ապրանքանշանն արդեն նոր ցուցասրահ ունի, որտեղ վաճառվում են ավանդական հայկական թռնչատառերով զարդարված հուշանվերներ: Թագանու հայկական տարազների տեսականուն ավելացել է հուշանվերների հավաքածու՝ գավաթներ, մագնիսներ, սփռոցներ: Ակնկալվում է, որ դրանք կգրավեն Մարտունի այցելող զբոսաշրջիկների: Այս բոլոր իրերն ստեղծվում են կանանց ձեռքերով՝ ապահովելով նոր աշխատատեղեր:

Տարազների համար էլ նոր կիրառություն է գտնվել: Այդ գունագեղ հանդերձանքները ոչ միայն վաճառվում են, այլև տրամադրվում Մարտունու բնակիչներին և հյուրերին՝ պրոֆեսիոնալ լուսանկարահանումների համար:

Իրականացնող | Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ

Սարվոր տուրիզմ

| Գավառ, Գեղարքունիք |

Բացառիկ տպավորություններ են սպասվում 1-2 օրով Գեղամա լեռների յայլաներում ապրող սարվորներին այցելողներին: Գեղատեսիլ բնություն և տեսարաններ, ծանոթություն սարվորների կյանքին ու կենցաղին, ազգային երգի ու խոհանոցի վերաբերյալ վարպետաց դասեր և ավելին: Տրանսպորտը, վրանները, քնապարկերը, սնունդը, ինչպես նաև ուղեկցորդը տրամադրվում են անհրաժեշտության դեպքում:

Իրականացնող | «Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ

Ծրագրային պատմություն

Ճայերը հանգրվանեցին Սևան քաղաքի կենտրոնական փողոցներում

Եթե 2020 թ. հուլիսի 17-ի կեսօրին Սևան քաղաքում լինեիք, ականատես կլինեիք, թե ինչպես են քաղաքի բնակիչները հիանում հարազատ քաղաքի կենտրոնական փողոցներում կատարվածով:

Պարզվում է, որ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ ավելի քան 30 տարի, Սևանում փողոցային նշաններ չեն եղել: Մարդիկ գիտեն, որ այս մեկը Շահումյան փողոցն է, իսկ մյուսը՝Էներգետիկների, բայց զբոսաշրջիկի կամ հյուրի համար Սևանը երկար ժամանակ եղել է անանուն փողոցների խառնաշփոթ:

Դա է պատճառը, որ Սևանի բնակիչները ոգևորությամբ հետևում էին քաղաքապետարանի բեռնատարին, որը մի փողոցից մյուսն էր տեղափոխվում ու տեղադրում փողոցային նշանները, զբոսաշրջային ուղղությունների քարտեզը և տեղեկատվական վահանակը, որոնք պատրաստվել են «Սևան» երիտասարդական ակումբ ՀԿ-ի կողմից՝ «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակներում:

Ինչպես ՀԿ նախագահ Գոհար Մնացականյանն է շեշտում, իր և թիմի համար կարևոր էր հանգել այնպիսի մի ստեղծարար գաղափարի, որը ոչ միայն կնշագրեր քաղաքի փողոցները, այլև քաղաքը կդարձներ հյուրընկալ վայր թե՛ հայաստանցի, և թե՛ դրսից եկող զբոսաշրջիկների համար:

Այս նպատակով էր, որ հայտարարվեց գաղափարների մրցույթ, և երկար մտագրոհներից, բանավեճերից և քննարկումներից հետո եկան այն եզրակացության, որ ճայը խորհրդանշական է այդ տարածքի համար: Այսօր արդեն Սևանի մի քանի փողոցների խաչմերուկներում ճայերի թևերը մատնացույց են անում ինչպես քաղաքի փողոցների անունները, այնպես էլ մոտակայքում գտնվող զբոսաշրջային վայրերի ուղղությունները, որոնք թվարկված են ցուցանակի վրա: Իսկ եթե տեխնոլոգիաների սիրահար եք, կարող եք նաև սկանավորել ցուցանակի QR կոդը և ավելին իմանալ նշված ուղղությունների մասին:

Սևանցիների ժպիտները մեծագույն պարգևն էին ինչպես «Սևան» երիտասարդական ակումբի, այնպես էլ Սևանի քաղաքապետարանի համար, որի գործընկերությունը հնարավոր դարձրեց իրագործել այս նախագիծը:

Ծրագրային պատմություն

Նաղաշի լավաշի՝ ավանդական հայկական թոնրատան վերածնունդը

Իրինա Թադևոսյանն ապրում է Հայաստանի Կոտայքի մարզի Բջնի գյուղում: Իրինայի ընտանիքը երկար տարիներ զբաղվել է լավաշ թխելով՝ սկզբից օգտագործելով ավանդական թոնրի տեխնոլոգիան, այնուհետև՝ կիսաարդյունաբերական էլեկտրական վառարանը:

Իրինայի խոսքերով՝ Բջնիում երկար տարիներ ոչ ոք թոնրի լավաշ չէր թխում: Ինչպես արագ իր բակում թխվող լավաշի բույրը հասավ հարևաններին, նույնքան արագ էլ տարածվեց Եվրոպական միությունից օժանդակություն ստանալու մասին լուրը, որի շնորհիվ վերականգնվել է թոնիրը և պատշգամբը դարձել հյուրընկալության հարմարավետ անկյուն:

Քանի որ Իրինայի տունը գտնվում է Բջնիի գլխավոր վայրերից մեկի՝ 11-րդ դարի եկեղեցու հարևանությամբ, նա վստահ է, որ իրենց համայնք այցելող զբոսաշրջիկները չեն կարողանա չգայթակղվել լավաշի բույրով ու անտարբեր անցնել իրենց տան կողքով: Իսկ երբ ներս մտան, հաստատ կհամտեսեն նաև իր և տանեցիների պատրաստած հայկական ավանդական ուտեստները:

Թոնրատան որոշ սարքավորումներ, փայտե սեղանն ու աթոռները, այցելուներին կերակուր մատուցելու կավե սպասքը Իրինային է տրամադրել «Լիկիու Երկիր» ՀԿ-ն, որը հանդիսանում է «ԵՄ հանուն մշակույթի.առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի ենթադրամաշնորհառու:

Ենթադրամաշնորհային նախագծի շրջանակներում ՀԿ-ն գնահատել է Բջնի և Արզական համայնքների սոցիալական իրավիճակը, այնուհետև քարտեզագրել է համայնքների սոցիալական ձեռներեցության այն հնարավորությունները, որոնք կարող են սոցիալական նշանակություն ունենալ և նվազագույն ներդրումների միջոցով դրական փոփոխությունների հանգեցնել:

Իրինայի բիզնեսն, անշուշտ, այդպիսինն է, քանի որ մշտապես լավաշ և թխվածք է տրամադրում համայնքի մանկապարտեզին:

Մաս 3

Նորարարությունը և ստեղծարարությունը՝ ի նպաստ մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում նորարարության և ստեղծարարության պակաս չի եղել: Գրքույկի տարբեր բաժիններում ներկայացված են նորարար մոտեցումներից և պրոդուկտներից շատերը: Այստեղ հատուկ անդրադառնում ենք ինովացիոն դրամաշնորհներին, որոնց նպատակն էր խթանել թիրախային համայնքներում մշակութային և զբոսաշրջային բացօթյա միջոցառումների իրականացումը:

Ինովացիոն դրամաշնորհների համար գաղափարների ընտրության նպատակով 2020 թ. օգոստոսի 4-10 անցկացվեց «ՑանցԱռ Սարդ»առցանց փառատոնը, որին մասնակցում էին 22 շահառու ՔՀԿ-ների և այլ գործընկերների շուրջ 100 ներկայացուցիչներ: ՍԱՐԴ-ը մի կողմից խորհրդանշում էր ծրագրային ՔՀԿ-ների ցանցը, իսկ մյուս կողմից կիրառվում որպես բացօթյա միջոցառումների մոտեցումը բնութագրող հապավում, այն է՝ #Ստեղծարար #ՆորԱրար #ԳաղափարՐ #(ոչ)ՄարԴաշատ:

Ի՞նչ էր ներառված ծրագրում

Ոգևորող նախատիպեր. միջոցառումը մեկնարկեց հանրային վեբինարով, որի ընթացքում 6 խոսնակներ ներկայացրին իրենց կազմակերպությունների և հարթակների կողմից Հայաստանում կազմակերպվող և հանրաճանաչ դարձած միջոցառումներ և փառատոններ:

Գաղափարների գեներացում. երեք մարզային ZOOM խմբերում մոդերատորների օգնությամբ վեր հանվեցին և քննարկվեցին բազմաթիվ հետաքրքիր գաղափարներ, որոնք կարող էին հավակնել ֆինանսական աջակցության:

Գաղափարների ներկայացում և ընտրություն. տեսաֆիլմերի միջոցով գաղափարների վիզուալ ներկայացում ժյուրիին և դրանցից լավագույնների ընտրություն այնպիսի չափանիշների հիման վրա, ինչպիսիք են նորարարությունը, կլաստերի/համայնքի տեսանելիության բարձրացումը, ֆինանսական կայունությունը և այլն:

Հիշարժան թվեր և փաստեր

100 | առցանց մասնակից

Ավելի քան 1000 | ֆեյսբուքյան դիտում

6 | խոսնակ

6 | մոդերատոր

7 | ժյուրիի անդամ

Zoom, google forms, menti-meter
Առցանց աշխատանքային գործիքներ

Ստեղծարար մշակութային ծրագիր
մնջախաղ և «Տիեզերք» խմբի համերգ

Գաղափարից իրականացում

33 գաղափարի առաջարկ

8 նախնական ընտրված գաղափար

3 հաղթած և ֆինանսավորում ստացած գաղափար

2020 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին երեք մարզերում կյանքի կոչվեցին լավագույն ինովացիոն գաղափարները. իրականացվեցին բացօթյա միջոցառումներ ու փառատոններ:

Ավելի մանրամասն ինովացիոն բացօթյա միջոցառումների մասին
https://www.youtube.com/watch?v=A-XZ7_Jv4wE

Արիշտայի փառատոն

Կոտայք

27.10-08.11.2020

Նախաձեռնությունն իրականացրել են Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիան և «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ-ն:

Արիշտայի փառատոնի գաղափարը փորձարկվեց ընտանիքներում: Արզականում, Բջնիում ու Մեղրաձորում բակերը լցվեցին արիշտայի տաշտերով ու պարաններին կախված ամեն չափի, համի ու գույնի արիշտայի շարեր, իսկ օդում կանգնած էր բովվող արիշտայի բույրը: Փորձառու կանայք երիտասարդների համար բացահայտում էին արիշտայի պատրաստման գաղտնիքները և կիսվում հատուկ բաղադրատոմսերով, արիշտայի ստեղծման մասին պատմություններ էին պատմում, երեխաներին երգեր ու խաղիկներ սովորեցնում:

3 համայնք
35 ընտանիք
57 մասնակից
1 գիրք

«UPDATE» երաժշտական փառատոն

ք. Սևան, Գեղարքունիք

26.09.2020

Նախաձեռնությունն իրականացվել է «Սևան» երիտասարդական ակումբի կողմից:

Սևանի քաղաքային այգու նորաբաց բեմում տեղի ունեցավ «Update» խորագրով բացօթյա համերգ–դրամահավաքը, որը հասանելի էր նաև ուղիղ հեռարձակմամբ: Համերգից առաջ հավաքվել էին Գեղարքունիքի տարածաշրջանի ժողովրդական երգեր, որոնք վերամշակվել էին մասնակից երաժշտական խմբերի կողմից և առաջին անգամ հնչեցին նոր մշակմամբ:

Համերգին ընդառաջ սևանցի երիտասարդ կամավորները նաև բարեկարգել էին տարածքը, սթրիթ-արթ գրավիչ նկարազարդումներ արել: Զբոսայգու հետագա բարեկարգման համար համերգի շրջանակներում նաև դրամահավաք անցկացվեց:

3 երաժշտական խումբ
60 հանդիսատես
3000 առցանց դիտում
20 ժողովրդական երգի գրառում
3 երգի վերամշակում
1 էլեկտրոնային գրքույկ

Ճախրելով սև արագիլի բարձունքում

միջոցառումների շարք, Շիրակ

23-27.09.2020 – 25.10.2020

Իրականացրեն են «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամը և «Ալվան ծաղիկ» սոցիալ կրթական կենտրոնը:

Սեպտեմբերի 23-27-ին Գյումրու «Մեղր և Բույս» սրճարանն ու մերձակա տարածքը վերածվեցին Արփիի հանրահռչակման հարթակի: Հնգօրյա միջոցառումների շարքում էին ֆոտոցուցահանդեսը և «Խազեր» երգչախմբի բացօթյա համերգը, թեյախմություն, վարպետաց դասեր, Արփիին նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթ, ինչպես նաև արշավ դեպի Արփի: Հոկտեմբերին Գյումրու երիտասարդների և Ծաղկուտի բնակիչների ջանքերով իրականացվեց համայնքի էսթետիկ բարեկարգում՝ սթրիթ-արթի ու լենդ-արթի միջոցով:

160 մասնակից
7 միջոցառում

NASA

Մաս 4

Գործընկերություն՝ ի նպաստ մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի նպատակների ու խնդիրների իրականացման գործում ներգրավվել են 44 տեղական, մարզային և ազգային կազմակերպություններ, թանգարաններ, դպրոցներ, ինչպես նաև 40 փորձագետներ:

4 ծրագիրն իրականացնող կազմակերպություն

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա

Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻՏԱՍ ՀԿ

2 խորհրդատվական ընկերություն

ԱՄ ՓԱՐԹՆԵՐՔ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ ՍՊԸ

«ՎԻՍՏԱԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ

22 շահառու ՔՀԿ

Գեղարքունիք

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ

«Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ

«Սևան» երիտասարդական ակումբ ՀԿ

Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ

Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ

Կոտայք

Երեխաների աջակցության հիմնադրամ

«Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ

«Լիկիու երկիր» ՀԿ

Հյուման Դիգնիթի ընդ Փիս ՀԿ

Միասին հանուն տնտեսական զարգացման ՀԿ

«Շենացնենք մեր գյուղը» ՀԿ

Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ

Տուրիզմի հետազոտական և զարգացման կենտրոն ՀԿ

Շիրակ

«Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական ՀԿ

Ամասիայի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ

«Առավոտ» բարեգործական ՀԿ

Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում ՀԿ

Գյումրի Թրավել Քլաբ ՀԿ

«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ

«Կանաչ Տերև» ՀԿ

«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ

Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն ՀԿ

6
շահառու թանգարան

Գեղարքունիքի երկրագիտական թանգարան	**Գեղարքունիք**
Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղ	
Կիլիկիայի հայերի պատմության թանգարան	**Կոտայք**
Օրբելի եղբայրների տուն-թանգարան	
Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ	**Շիրակ**
Միհեր Մկրտչյանի թանգարան	

11
շահառու դպրոց

Գավառի ավագ դպրոց
Լճաշենի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց
Նորատուս գյուղի N1 միջնակարգ դպրոց
Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց
Արզականի միջնակարգ դպրոց
Բջնիի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց
Հրազդանի Հ. Օրբելու անվան N13 ավագ դպրոց
Սոլակի միջնակարգ դպրոց
Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան
Գյումրու տնտեսագիտական վարժարան
Ծաղկուտի միջնակարգ դպրոց

Ալյոնա Լուգովցովա
Աղասի Թադևոսյան
Անդրանիկ Մոսինյան
Արեգ Կարապետյան
Արտակ Մարտիրոսյան
Գեղամ Վարդանյան
Դիանա Ավետյան
Զառա Լավչյան
Զարմինե Զեյթունցյան
Լուսինե Խառատյան
Կարեն Պետրոսյան
Կարինե Հարությունյան
Հուսիկ Սարգսյան
Մակրիտա Ավջյան
Մանուկ Պետրոսյան
Նազարեթ Սեֆերյան
Նարինե Թադևոսյան
Նարինե Սաֆարյան
Նիք Հանիսեթ
Նունե Մանուկյան
Նվարդ Մելքոնյան
Սերգեյ Լաբոդա
Վահագն Վարդումյան
Վլադիմիր Սահակյան
Տաթևիկ Սիմոնյան
Տանյա Թորոսյան

26
փորձագետ
ներառյալ դասընթացավարներ, խորհրդատուներ, մենթորներ

14
դասընթացավար
ներգրավված շահառու ՔՀԿ-ների կողմից իրականացված դասընթացներին

Աղուն Հազրյան
Անահիտ Մինասյան
Աշոտ Օհանյան
Աստղիկ Հովեյան
Արամ Հարությունյան
Արման Ղազարյան
Լալա Մկրտչյան
Լիլիթ Մնացականյան
Հակոբ Սարգսյան
Մերի Կոշտոյան
Միհեր Խաչատրյան
Սիլվա Այվազյան
Սիլվա Կևեյան
Վահագն Վարդումյան

Թիմի անդամները

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Եսթեր Հակոբյան, Ծրագրի ղեկավար

Տաթև Ասրյան, Ծրագրի համակարգող

Արևիկ Հարությունյան, Ծրագրի օգնական

Արմինե Դադայան, ֆինանսական ղեկավար

Հասմիկ Գինովյան, հաշվապահ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

Նունե Սարգսյան, թիմի ղեկավար

Արշալույս Մուրադյան, Ծրագրի օգնական

Ալեքսանդր Իսպիրյան, հաշվապահ

Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն ՍԻՎԻՏԱՍ ՀԿ

Կարինե Հարությունյան, թիմի ղեկավար

Լուսինե Ավետիսյան, հաշվապահ

Թանգարանների աշխատողների և ընկերների ասոցիացիա

Հայկ Մկրտչյան, թիմի ղեկավար

Սուսաննա Մարգարյան, հաշվապահ